13· Շարուրը և Նախիջևանը ժամանակաւորապէս օժտւում են ինքնավարութեամբ՝ գտնելով Թիւրքիայի հովանաւորութեան տակ, մինչև որոշի նրանց բախտը:

14· Այս դաշնագիրը պէտք է ենթարկւի վաւերացման Հայաստանի Խորհրդարանի և Անդորայի Ազգային Մեծ Ժողովի կողմից մի ամսւայ ընթացքում:

15· Թիւրքիան պարտաւորւում է Հայաստանի գրաւած հողամասերը դատարկել, երբ Հայաստանը կը սկսէ զօրացրում, և վերջնականապէս կը դատարկէ, երբ հայկական զօրքի թիւը կը հասնի պայմաններում որոշած չափին»:*)

Պատերազմութեան Ալեքսանդրապոլ մեկնելու հետ զուգընթաց, Երևանում, կատարւեց կառավարական փոփոխութիւն: Հ. Օհանջանեանի դահլիճը հրաժարական տւեց և նրան յաջորդեց Ս. Վրացեանի նախարարութիւնը — վարչապետ և արտաքին գործոց նախարար Ս. Վրացեան, զինւորական նախարար Դրօ Կանայեան, օգնական՝ զօրավար Ի. Հախվերդեան, արդարադատութեան՝ Ա. Խոնդկարեան, ելևմտական՝ Հ. Տէրտէրեան, օգնական՝ Գ. Ջաղէթեան, հանր. կրթութեան և արւեստի՝ Վ. Մինախորեան, գիւղատնտեսութեան՝ Ա. Ցովհաննիսեան, աշխատանքի վարիչ՝ Վ. Բարայեան, ներքին և խնամատարութեան նախարարութիւնները մնում էին բաց: Կառավարութեան մէջ մտնելու առաջարկ եղաւ և Հայաստանի սոց.-դեմ. բանւ. կուսակցութեան, ինչպէս և Թիֆլիսի «Աշխատաւոր»-ի շուրջ եղող գործիչներին — մերժեցին՝ համարելով կացութիւնը շատ ծանր և անստոյգ: Ի պատիւ հայ սոց.-յեղափոխականների, Հայաստանի ամենատաղնապալի վայրկեանին, նրանք կարողացան իրենց անձնական ու կուսակցական շահը ստորադասել հայ ժողովրդի բարիքին և հակառակ ակներև դժւարութիւններին, մտան կառավարութեան մէջ:

Նոյ. 25-ին կառավարութիւնը հաստատւեց Խորհրդարանի կողմից և դեռ նոր էր անցել գործի, երբ նոյ. 29-ին բարդութիւններ առաջ եկան Ղազախի ճակատում. հայ կոմունիստները Ազրբէջանի օգնութեամբ մտել էին Իջևան: Իսկ նոյ. 30-ին Լեգրանը կառավարութեան ներկայացրեց վերջնագիր, որով պահանջում էր խորհրդայնացնել Հայաստանը: Կառավարութեան ոչինչ չէր մնում, բայց եթէ տեղի տալ: Ցենւած խորհրդարանական ֆրակցիայի որոշման վրա, կառավարութիւնը բանակցութեան մտաւ Լեգրանի հետ և դեկտ. 2-ին ստորագրւեց հետևեալ համաձայնութիւնը.

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Ռ.Ս.Ֆ.Ս.Հ. լիազօր ներկայացուցչութեան և Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան միջև:

2 դեկտ. 1920թ., մի կողմից Ռ.Ս.Ֆ.Ս.Հ. լիազօր ներկայացուցիչ ընկ. Լեգրանը Ռ.Կ.Կ.Կ.-ի լիազօրութեամբ, ի դիմաց Ռուսաստանի

*) Պայմանները գրի են առնւած Ա. Խատիսեանի կողմից: